

Այս օրերս յայտնի լուսանկար Պ. Յովհաննէս Բիրքչեան հանդիպելով Ս. Էջմիածին, Ճեմարանի հարաւային կողմը դրուած Արմաւրի և այլ տեղեաց բեկոռած արձանագրութեանց ընդ օրինակութիւնը վեր առաւ։ Այդ արձանագրերից մէկն հենց այս տարի է գտնուած Արմաւրում։ Որ Կոմս Սելարով երկու գերեզմանատեղ քանդելով և բան չըգտնելով՝ հեղնարար ասել էր թէ այս տեղ Արմաւիր չը կայ։ Հնագէտ խուզարկուն երկու գերեզմանատեղով չը պէտք է բաւականանայ։ այլ այդ գիտութեան յատկացեալ փորութեաներով պէտք է աշխատէ իւր հետաքրքրութեան բաւականութիւն տալ։ Պատմական ցուցմունքները, ժողովրդական աւանդութիւնները և հնութեան հետքերը, որոնք առատ գերեզմանաքարեր են մատակարարում չըջակայից, և գտնուած բեկոռած արձանագրութիւնները անհերքելի ապացոյցներ են Արմաւրի լինելութեան։ Դեռ կան ծերունիներ, որոնք տեսել են Արմաւրի հնութիւնները աւելի շէն և կանգուն։

«Մեղու Հայաստանի» 87 համարի հետ ստացանք Պ Սպանդար Սպանդարեանի եկող 1884 թուի Յունվար ամսից հրատարակելիք Նոր—Պար վերնագրով լրագրի ծանուցումն, Այդ ծանուցումից երևումէ որ Նոր—Պարը լինելու է մի օրինակելի լրագիր, արժանի, որ հայերն ստանային։ Պ. Սպանդար Սպանդարեան արդէն յայտնի է մեր դրական ասպարիզում։ և նորա անունը երաշխաւոր է իւր սկսելիք գործի յաջողութեան, Յանկանումենք յաջողութիւն։

Ամսոյս 24ին Ս. Գէորգի տօնի օրուայ Ճեմարանի տարենարձի հանդիսի նկարագրութիւնը և ուսումնական հաշիւը կըտպենք Հոկտեմբերի ամսատետրում։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

(ՍԻՆՕԳԻ ՕՐԱԳՐՈՒԹԻԻՆՆԵՐԻՑ ՔԱՂՈՒԱՅ)

ԴՊՐՈՅԱԿԱՆ

15-ին Յուլիսի Սինօգր ի նկատի ունելով Աստրախանու Թեմական Վերատեսուչ Խորէն վարդապետ Ստեփանէի տարւոյս Փետրվարի 5-ին №35 յայտարարութիւնը, Հոգևոր Ծխական Օրիորդական դպրոցի յատուկութեան համար կազմած հոգարարձութեան գործաւարութեան աղագաւ հաստատումէ առաջարկած հրահանգները։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍԻՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱՇՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.